



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 44Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2007
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 23Լ ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» թիվ 23Լ որոշման 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ դատական նիստն անցկացվում է այլ դատարանի վարչական շենքում, տվյալ գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ դատական նիստի ընթացքում ներկայացված և արձանագրված փաստաթղթերի, կարող են ներկայացվել ինչպես դատական նիստի անցկացման վայրի դատարանի, այնպես էլ՝ գործը քննող դատարանի գրասենյակ: Դատական նիստի անցկացման վայրի դատարանի գրասենյակ հանձնված տվյալ գործին վերաբերող բոլոր փաստաթղթերն ընդունվում և գրանցվում (հաշվառվում) են, այնուհետև, սեղմ ժամկետում համապատասխան ուղեկցական գրությամբ վերահասցեագրվում են գործը քննող դատարանի նախագահին՝ վերջինիս կողմից գործը քննող դատավորին փոխանցելու նպատակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի նոյեմբերի 17-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

2017թ. նոյեմբերի 16
ք. Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ